



+ Հ Ա Ն Գ Ի Ս Տ Դ Ա Ի Թ Ա Ր Ք . Մ Ա Հ Ա Կ Ե Ա Ն Ի +



Հայ Առաքելական Եկեղեցու Ֆրանսայի Թեմի Առաջնորդի Գրասենեակը խոր ցառով կը գումէ Ս. Դավիթ Արք. Սահակեանի վախճանումը Երեքշաբթի 15 Մարտին Լիոնի մէջ, 81 տարեկան հասակին: Ան ձեռնադրուած էր 1957-ին Երուսաղէմի մէջ Տիրան Արք. Ներսիսեանի կողմէ: 1965-ին կը ստանայ Ծայրագոյն Վարդապետի աստիճան: Հայ Եկեղեցոյ ծառայութեան դաշտին մէջ վարած է զանազան կարեւոր պաշտօններ եւ ծառայած է զանազան ծովներու մէջ, Եւրոպայի եւ ամբողջ աշխարհի տարածքին: Մտացած է Ասպետի կարգի շքանշան Ֆրանսայի մէջ: Եղած է Երուսաղէմի վանքի լուսարարապետ: 1997-ին կը վերադառնայ Լիոն, ուր կը ստանայ Արժանեաց շքանշան իր ձեռնադրութեան 40-ամեակին առթիւ: Հակառակ որ առողջական խնդիրներ ունէր, միշտ պատրաստակամօրէն շարունակած է ծառայել Լիոնի շրջանի համայնքներուն: Ան վաստակ ունէր նաեւ միջ-եկեղեցական կեանքէն ներս: Մեր սիրելի Սրբազան Հօր յուղարկաւորութեան առթիւ պատարագ պիտի մատուցուի Երկուշաբթի 21 Մարտ 2016-ի առաւօտեան ժամը 10-ին, Լիոնի Ս. Յակոբ Մայր եկեղեցոյ մէջ, 295 rue André-Philip - 40, rue d'Arménie - 69003 Lyon: Պատարագի ընթացքին պիտի կատարուի հանգուցեալ Սրբազան Հօր վերջին օծումը եւ աւարտին՝ յուղարկաւորութիւնը: Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Գ Ա Ր Ն Ա Ն Ա Յ Ի Ն Թ Ե Մ Ա Կ Ա Ն Ը Ն Թ Ր Ի Ք



Հայ Առաքելական Եկեղեցոյ Ֆրանսայի Թեմական Խորհուրդը Չորեքշաբթի 4 Մայիս 2016-ի ժամը 20-ին կը կազմակերպէ իր զարնանային ընթրիքը Համբարձման տօնին առթիւ Marriott Champs Élysées պանդոկին մէջ, (70 avenue des Champs-Élysées 75008 Paris): Ընտանեկան մթնոլորտ, երգ-երաժշտութիւն, պար եւ անակնկալներ: Եկէք ընտանիքով, ծնողներով եւ ընկերներով դիմաւորելու եւ տօնելու գարունը մեր Առաջնորդ Սրբազան Հօր՝ Գերշ. Ս. Վահան Եպս. Յովհաննէսեանի հետ, որ ուրախ պիտի ըլլայ տեսնելու հաւատացեալները այս ընթրիքին եւ իր շուրջը: Մասնակցութեան սակ՝ 110 եւրօ մէկ անձի: Արձանագրութիւնները կը հաստատուին գումարի փոխանցումով: Չէքերը գրել diocèse de l'église arménienne անունով: Արձանագրութեան վերջնական թուական՝ Երեքշաբթի 26 Ապրիլ 2016: Յաւելեալ մանրամասնութեանց եւ տեղերու ապահովման համար դիմել Տիկին Մարկոյին՝ 06 15 02 76 84:

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ Ֆ Ր Ա Ն Մ Ս Յ Ի Թ Ե Մ Ի Ե Ր Ի Տ Ա Ս Ա Ր Դ Ա Կ Ա Ն Մ Ի Ո Ի Թ Ե Ա Ն



Հայ Առաքելական Եկեղեցոյ Ֆրանսայի Թեմի Երիտասարդաց Միութեան Կեդրոնական Վարչութեան ընտրեալ անդամները Փարիզի մէջ հանդիպում մը ունեցան 5 մարտ 2016-ին որպէս իրենց առաջին աշխատանքային ժողովը, նախագահութեամբ Գերշ. Ս. Վահան Եպս. Յովհաննէսեանի: Սրբազան Հայրը ժողովը բացաւ աղօթքով եւ ապա ներկայացուց իր տեսլականը Երիտասարդաց Միութեան մասին: Օրակարգի նիւթերուն անցնելէ առաջ վերաբաղ մը կատարուեցաւ 6 Փետրուար 2016-ին Լիոնի մէջ գումարուած տարեկան Ընդհանուր ժողովին, որ մեծ յաջողութիւն գտած էր իրար մօտ բերելով աւելի քան 150 մասնակցողներ ամբողջ Ֆրանսայէն: Այդ ժողովը ընտրած էր Երիտասարդաց Միութեան Ֆրանսայի Կեդրոնական Վարչութիւնը՝ 5 հոգիէ բաղկացած՝ ատենապետ, քարտուղար, գանձապահ եւ հաղորդակցութեան երկու պատասխանատուներ, ինչպէս նաեւ գործունէութեան ծրագիր մը կազմուած էր աշխատանքի բաժանում կատարուած էր վարչութեան մէջ: Աշխատանքային այս հանդիպումի ընթացքին աշխուժ եւ արդիւնաւետ կերպով քննարկուեցան միութեան կանոնադիրը, կառոյցն ու զարգացման ուղղութիւնները:

Պ Ա Տ Ա Ր Ա Գ Ի Մ Ե Կ Ն Ա Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն




Առաջնորդի Գրասենեակը ուրախութեամբ կը յայտնէ, որ պիտի ձեռնարկէ դասընթացքի մը, որու նիւթը պիտի ըլլայ «Քննարկել մեր պատարագը էջ առ էջ»: Սկիզբը հակիրճ կերպով պիտի ներկայացուին Պատարագի խորհուրդի Աստուածաշնչական արմատները: Ապա պիտի անցնինք Հայ Առաքելական Եկեղեցոյ մէջ Պատարագի արարողութեան զարգացման հանգրուաններուն: Բացատրութիւնները պիտի կեդրոնանան գլխաւորաբար Պատարագի աղօթքներուն եւ երգեցողութեան վրայ: Դասերը պիտի սկսին զարնան, Զատիկէն վերջ, Գերշ. Ս. Վահան Եպս. Յովհաննէսեանի կողմէ, հայերէնով եւ ֆրանսերէնով, ընկերակցութեամբ պաստառի վրայ ֆրանսերէնով բացատրութիւններու: Սրբազան Հայրը պիտի բացատրէ այսօրուան Պատարագի կառոյցը, շրջագիծը, իմաստը եւ դերը գլխաւոր երգերու եւ աղօթքներու: Դասերու ընթացքին պիտի գործածուի Romaric Thomas-ի աշխատանքներէ վերջերս Լիոնի մէջ հրատարակուած «La Divine Liturgie du Saint Sacrifice» գիրքը: Մասնակիցները պիտի ստանան դասընթացքի ամփոփումները: Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել 01 43 59 67 03 թիւին եւ կամ կապ պահել e-mail-ով bureauduprimat@diocesearmenien.fr:

Ա Ռ Ա Ջ Ն Ո Ր Դ Ս Ր Բ Ա Ջ Ա Ն Ի Ա Յ Յ Ե Լ Ո Ի Թ Ի Ի Ն Ը Ս Պ Ա Ն Ի Ո Յ Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ն Ե Ր




Որպէս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ, Թեմակալ Առաջնորդ Գերշ. Ս. Վահան Եպս. Յովհաննէսեան 21-23 Փետրուարին այցելութիւն մը տուաւ Սպանիոյ հայկական համայնքին, օգնելու համար հոգեւորականներուն եւ համայնքի ղեկավարներուն՝ ստեղծելու համար թեմական կառոյց: Առաջնորդ Սրբազանը իր եռօրեայ այցելութիւնը սկսաւ 21 Փետրուարին, ժողով գումարելով Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ Հոգշ. Ս. Սասուն Վրդ. Զմրուխտեանի, Սպանիոյ մէջ ծառայող հոգեւորականներու եւ վարչական խորհուրդի կարգ մը անդամներու հետ: Այս առթիւ Վահան Սրբազան Մատրիտի մէջ այցելեց Հայաստանի Դեսպան Պրն. Աւետ Ադոնցիին եւ միասնաբար քննարկեցին Սպանիոյ Հայկական համայնքը աշխուժացնելու զանազան կարելիութիւնները: Հանդիպումին ներկայ էր նաեւ Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ Ս. Սասուն Վրդ. Զմրուխտեանը:

«Ք Ր Ի Ս Տ Ո Ս Ի Չ Ա Ր Չ Ա Ր Ա Ն Ք Ն Ե Ր Ը» Ֆ Ի Լ Մ Ի Ց Ո Ի Ց Ա Դ Դ Ո Ի Թ Ի Ի Ն



Առաջնորդի Գրասենեակը ուրախութեամբ կը յայտարարէ, որ Աստուածաշունչի սերտողութեան յաջորդ հանդիպումին պիտի ցուցադրուի Մել Կիպարնի «Քրիստոսի Չարչարանքները» ֆիլմը, Աւագ Չորեքշաբթի 23 Մարտի ժամը 20-ին, «Նուրիան Ֆրէնկեան» սրահին մէջ: Ֆիլմը ֆրանսերէն տողերով թարգմանուած պիտի ըլլայ: Ձեռնարկը պիտի սկսի Առաջնորդ Սրբազան Հօր՝ Գերշ. Ս. Վահան Եպս. Յովհաննէսեանի հակիրճ դասախօսութեամբ, որով ան պիտի բացատրէ թէ ինչն է մեր Տէր Յիսուս Քրիստոս պէտք էր չարչարուէր ու խաչուէր: Ֆիլմի ցուցադրութենէն ետք տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւն Մայր եկեղեցոյ Տիկնանց Յանձնախումբի կողմէ: Ձեզ կը սպասենք խիտ շարքերով:

« Ա Ի Ա Գ Շ Ա Բ Թ Ո Ի Ա Ն Բ Ա Յ Ա Տ Դ Ո Ի Թ Ի Ն Ը »



Առաջնորդի Կիրակին, որ այս տարի կը հանդիպի Մարտ 20-ին, կեդրափակէ Մեծ Պահքի շրջանը ըստ Հայ Առաքելական Եկեղեցոյ աւանդութիւններուն, եւ մեզ կ'առաջնորդէ դէպի պահքի այլ շաբաթ մը, որ կը կոչուի Աւագ Շաբաթ, որ կը սկսի Օղակազարդի յաջորդող Երկուշաբթի եւ կ'աւարտի Զատիկուան տօնակատարութեամբ, որ այս տարի կը հանդիպի 27 Մարտին: Աւագ Շաբաթը կը...

Շարունակութիւն

Կ Ա Ր Ճ Լ Ո Ի Բ Ե Ր ...

- Առաջնորդի Գրասենեակը ուրախութեամբ կը տեղեկացնէ որ բարեգործական աճուրդ մը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Յունիսին ի նպաստ Հայ Առաքելական Եկեղեցոյ Ֆրանսայի Թեմին: Այս նպատակով նուէրներ պիտի հաւաքենք յաջողութեամբ պսակելու համար այս ծրագիրը: Եթէ ունիք առարկաներ, ինչպէս՝ գորգ, իւրանկար, ծաղկաման, գոհարեղէն եւայլն, կապ հաստատեցէք աճուրդի պատասխանատուին՝ Շուշան Դուրեանի հետ՝ 06 48 93 70 16 եւ կամ՝ chouchdourian@hotmail.com . Այս ձեռնարկի նպատակն է տնտեսական միջոցներ գոյացնել Առաջնորդի Գրասենեակին եւ Հայ Առաքելական Եկեղեցոյ Ֆրանսայի Թեմին համար: Կանխապայտ շնորհակալութիւն բոլորիդ:
- Կը ճանչնաք բարեկամ մը կամ ձեր ընտանիքի անդամ մը որ կը փափաքի ստանալ մեր համացանցային լրատու թերթիկը: Եթէ այդ՝ դրկեցէք իր համացանցային հասցէն եւ անունը bureauduprimat@diocesearmenien.fr հասցէին:
- Առաջնորդ Սրբազանը կը փափաքի Թեմին համար անձնական օգնական մը ունենալ: Ենթական պէտք է տիրապետէ ֆրանսերէն խօսակցական եւ գրաւոր լեզուին եւ «word»-ին: Տրամադրելի պէտք է ըլլայ 2-3 ժամ Երկուշաբթիէն Ուրբաթ: Հետաքրքրուողները կրնան կապ պահել Առաջնորդի Գրասենեակին հետ՝ bureauduprimat@diocesearmenien.fr:

